ԴՎԻՆԻ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՂՄԻՆԴՐԸ ՈՐՊԵՍ ԹՎԱԳՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

Դվին հնավայրում հայտնաբերված IV-VII դդ. ծածկի կղմինդրի տեսականու՝ հնագիտական միջավայրի համատեքստում իրականացված քննությամբ բացահայտվում է նյութի զարգացման ընթացքի որոշակի համապատասխանություն Դվինի կառուցապատման վաղ միջնադարյան հիմնական շրջափուլերին:

Առաջին շինարարական շրջափուլ (IV դ. 30-ականներ-V դ. առաջին կես)[1]

1987 թ. Դվինի միջնաբերդում՝ «Արշակունյաց գահադահլիճին»[2] (այսուհետև՝ գահադահլիճ) կից հարավարևելյան հատվածում, հայտնաբերվել է ծածկի կղմինդրի մի քանի հարյուր բեկոր:

Սրանք ի հայտ են եկել 17 մ խորության հորում[3]՝ IV-V դդ. հատկանշական խեցանոթների (շեղազարդ, եղենազարդ գոտիներով բոլորված կարասների, ակոսագիծ ժապավեններով հարդարված կիսագնդաձև կամ տափակ լայն նստուկներով կճուճների), բլթակազարդ տաշվածքներով ապակե թասերի բեկորների և մանր ու խոշոր եղջերավորների ոսկորների մոխրառատ միջավայրում:

Մասամբ վերականգնված կղմինդրները՝ ***երկայնակի բարձր կողերով, լայնակի եզրային ելուստ-թմբիկով, ուղղանկյուն, տափակ, զանգվածեղ սալեր են և կիսափողրակավոր ու երկլանջ կալիպտերներ***[4] (նկ. 1): Տափակ սալերի վերին մակերեսին ակոսված են զույգ ոլորագծեր:

---

[1] Դվինի կառուցապատման վաղմիջնադարյան հիմնական շրջափուլերի մասին մանրամասն տե՛ս **A. Kalantarian,** Dvin. Histoire et Archeologie de la ville medievale, Paris, 1996, էջ 59-79, 85:

[2] Ըստ 1960-1961 թթ. պեղումների արդյունքների՝ Արշակունիներին վերագրվող IV դ. գահանիստ դահլիճ (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. II, Եր., 1982, էջ 89-96), իսկ ըստ 1985 թ. պեղումների արդյունքների՝ վաղ քրիստոնեական հայկական եկեղեցի (տե՛ս **A. Kalantarian**, նշվ. աշխ., էջ 63-66):

[3] Գահադահլիճից 3,0 մ հեռավորության վրա, -C+2 քառակուսիում բացված հորի տր.՝ 1,20 մ, խնամքով սվաղված հատակինը՝ 0,90 մ, պատերին՝ յուրաքանչյուր 0,40 մետրի վրա՝ որմնախորշեր. տե՛ս Գ. Քոչարյանի 1987 թ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինի հնագիտական արշավախմբի գրադարանում, այսուհետև՝ Դվինում):

[4] Կղմինդրի տափակ սալերի չափերն են. երկ.՝ 43÷50 սմ, թմբիկավոր եզրինը՝ 32÷38 սմ, սալի հաստ.՝ 2÷3 սմ, կողի բարձր.՝ 2,5÷4 սմ, ելուստ-թմբիկի լայն.՝ 2,5÷4,5 սմ, բարձր.՝ 1,2÷1,5 սմ: Կալիպտերների չափերն են. երկ.՝ 45÷46 սմ, վերին ծայրի լայն.՝ 18 սմ, ստորին ծայրինը՝ 14 սմ, հաստ.՝ 2÷2,5 սմ:

Կղմինդրները շիկավուն, դեղնավուն, վարդագույն, նարնջագույն երանգ ունեն: Տափակ սալերի կողերը և կալիպտերները ներկված են կարմիր:

Ըստ Ա. Քալանթարյանի հայտնած նախնական կարծիքի՝ «Այս խոշոր կղմինդրները, հավանաբար, պատկանել են IV դ. բազիլիկի (այն է՝ եռանավ գահադահլիճի - Գ. Ք.) տանիքին»[5] և խիստ տարբերվում են լայն տարածում ունեցած VI-VII դդ. կղմինդրներից:

Իսկապես, գահադահլիճի IV դ. տանիքի քննվող կղմինդրներն ընդհանուր նկարագրով հիշեցնում են Գառնիի հեթանոսական տաճարի բազալտե, լայն թմբիկավոր ծածկասալերն ու սրանց ագուցող երկլանջ կալիպտերները, ինչպես նաև Դվինի մ. թ. I-II դդ. բազալտե ծածկասալը[6]: Որոշ մանրամասների (թմբիկավոր սալերին բնորոշ «ատամ» հավելվածի, երկլանջ կալիպտերների եզրային աստիճանաձև նեղ մասի) բացակայությամբ հանդերձ՝ Դվինի կղմինդրները (խոշորությամբ, մասամբ՝ նաև ձևաբանորեն) Արտաշատի մ. թ. ա. II-մ. թ. II դդ. կղմինդրների[7] պարզեցված նմանակումներն են:

Վերը նկարագրվածին հար և նման լայն թմբիկով կղմինդրի տափակ սալերի բեկորներ հայտնաբերվել են նաև՝

- միջնաբերդում՝ գահադահլիճի արևմտյան հարևանությամբ («բակ» պեղավայրում), անտիկ կառույցի քարաշեն հիմքերի վրա IV-V դդ. վերակառուցված շենքի տարբեր հատվածներում[8],
- ստորին բերդում՝ հարավային բուրգի տակ բացահայտված V-VI դդ. հսկայածավալ շինության տարածքում[9],
- կենտրոնական թաղամասում՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե IV-V դդ. եկեղեցու ներսում և շրջակայքում՝ ստորին հորիզոնների պեղումների ժամանակ[10]:

Այսպիսով, տվյալ հնառճ կղմինդրների ներկայությունն ինքնին վկա-

---

[5] **A. Kalantarian**, նշվ. աշխ., էջ 42, տախտ. 58:3-5:

[6] Դվինի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե եկեղեցուց մոտ 15 մ արևմուտք հայտնաբերվել է Գառնիի հեթանոսական տաճարի տանիքի ծածկասալերին հար և նման բազալտե ծածկասալ, մանրամասն տե՛ս **Գ. Քոչարյան,** Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ), «Պատմա-բանասիրական հանդես», 2002, № 3, էջ 206-207, 211-213, նկ. 5:

[7] Արտաշատում հայտնաբերված անտիկ ժամանակաշրջանի կղմինդրների մասին մանրամասն տե՛ս **Канецян А. Г.** Античные черепицы из раскопок Арташата // «Советская археология», 1984, № 1, էջ 183-187:

[8] Վաղմիջնադարյան շինության մասին և համապատասխան գրականություն տե՛ս **Գ. Քոչարյան,** Արտաշիսյան ժամանակաշրջանի շինություն Դվինում, «Հուշարձան», Տարեգիրք, Ը, Եր., 2013, էջ 97:

[9] Տե՛ս **Жамкочян А.** Раскопки на территории Южной башни цитадели // **Акопян Н. Г., Бабаян Ф. С., Жамкочян А. С., Калантарян А. А., Кафадарян К. К., Кочарян Г. Г.** Двин IV. Город Двин и его раскопки (1981-1985). Ер., 2008, էջ 64-65:

[10] Տե՛ս **A. Kalantarian**, նշվ. աշխ., էջ 42: Կաթողիկե եկեղեցու հարավարևմտյան հատվածում, հարավային պատի հիմքերը բացելիս հայտնաբերվել են լայն թմբիկով կղմինդրի տափակ սալերի բեկորներ (տե՛ս Գ. Քոչարյանի 1993 թ. դաշտային օրագիրը, պահվում է Դվինում):

յում է թվարկած վաղմիջնադարյան շինությունների ժամանակագրական մերձավորության մասին և լրացուցիչ հիմք է սրանց շինարարության թվագրման շրջանակները (IV դ.-V դ. առաջին կես) ճշգրտելու համար:

IV դ. 60-ականներին՝ հայ-պարսկական պատերազմի ժամանակ, Պարսից Շապուհ Բ արքայի զորքերը ներխուժեցին Արտաշատ, Վաղարշապատ, Զարեհավան, Զարիշատ, Վան, Նախճավան և «քանդեցին … կրակ տվին այրեցին … բոլոր շինվածքները հիմնահատակ կործանեցին»[11]: Անտիկ քաղաքների այս համատարած ավերածության իրավիճակում Արտաշատ-Վաղարշապատ «Բուն պողոտային» հարող նորակերտ Խոսրովաշեն-Դվինը, անշուշտ, պետք է որ տուժած լիներ: Թեպետ սկզբնաղբյուրներում չի հիշատակվում, սակայն Դվինի միջնաբերդի և հոգևոր կենտրոնի պեղումները բացահայտել են լայնածավալ կառուցապատում արդեն IV դ. երկրորդ կեսին-V դ. սկզբին:

Ամենայն հավանականությամբ, ընդլայնված վերակառուցում է իրականացվել Վռամշապուհ Արշակունու գահակալության (389-414 թթ.) խաղաղ տարիներին, որի ժամանակ և գահադահիճի սյունախարիսխների տակ դրել են արդեն քանդված մոնումենտալ շինություններից վերցված տուֆե և ավազաքարե սրբատաշ սալեր (որոնց մի մասը կրում է կրաշաղախի, ներկի հետքեր), ճարտարապետական մանրամասներ (օր. պատուհանների անկյունաքարեր և այլն), իսկ հին կավածեփ հատակին փռել են մանր գետաքարեր ու սվաղել կրաշաղախի շերտով[12]:

Տանիքի կղմինդրե ծածկը փոխարինվել է նորով: Ընդ որում VI դ. կեսին վերջնականապես ավերված գահադահիճի կրաշաղախե հատակի վրայի մոխրախառն շերտում և շրջակայքում հայտնաբերվել են IV դ. կղմինդրից տարբերվող՝ խիստ քայքայված, հրդեհի հետևանքով գորշավուն երանգ ստացած, հազիվ նշմարելի կարմիր ներկի հետքերով, ուղղաձիգ կողերով տափակ սալերի և լայն փռվածքով կիսափողրակավոր կալիպտերների բեկորներ:

Երկրորդ շինարարական շրջափուլ (V դ. երկրորդ կես-VI դ. վերջ)

V դ. 60-70-ականներին՝ Հայոց հոգևոր կենտրոնը Վաղարշապատից Դվին տեղափոխելու կապակցությամբ իրականացված լայնածավալ շինարարության ժամանակ, վերակառուցված կաթողիկե եկեղեցու տանիքը ծածկվել է նոր կղմինդրով[13]:

---

[11] **Փավստոս Բուզանդ,** Հայոց պատմություն: Բնագիրը՝ Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանի, Եր., 1987, IV, ԾԵ:

[12] Տե՛ս **Кочарян Г., Калантарян А., Кафадарян К.** Античный слой на территории центрального квартала и цитадели Двина // **Акопян Н. Г., Бабаян Ф. С. и др.** Двин IV. Город Двин и его раскопки (1981–1985), էջ 139, 143-145:

[13] Կաթողիկե եկեղեցին ենթարկվել է հատակագծային փոփոխության. հավելվել են ավագ խորանին կից ավանդատները, արտաքին սյունասրահը, ձևավորվել է խճանկարով նոր հատակ, նորոգվել է տանիքը (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Եր., 1952, էջ 88-100, **Ա. Ա. Քալանթարյան, Կ. Կ. Ղաֆադարյան,** Դվինի վաղմիջնադարյան ճարտարապետության որոշ հարցեր, «Պատմա-բանասիրական հանդես», 1990, № 1, էջ 140-141):

Հին կղմինդրե ծածկի մնացորդներ հայտնաբերվել են եկեղեցու հարավարևմտյան կողմում, նույն ժամանակահատվածում կառուցված կաթողիկոսական պալատի հատակի տակ և արևելյան սենյակների՝ VI դ. 60-ականներին իրականացված նոր և հին հատակների մակարդակների միջև լցված խճի շերտի մեջ[14]: Նման կղմինդրի բեկորներ ի հայտ են եկել նաև եկեղեցու խորանի հարավարևելյան կողմում (IV-V դդ. սպիտակ ավազաքարե խճառատ շերտի վրա) բացահայտված տնտեսական ավերված կառույցի՝ կավե շաղախով սվաղված հատակին[15]:

Կաթողիկեի քննվող կղմինդրների ***բարձր, ուղղաձիգ կողերով տափակ սալերը մի կողմում նեղանում են և մյուս հարթ մասում ունեն նեղ դարակիկ՝ վերին կղմինդրի հենման համար: Իսկ կիսափողրակավոր կալիպտերները նեղացող մասում ունեն մատնանման ելուստ՝ վերին շարքի կալիպտերների հենման համար***[16] (նկ. 2,1): Կղմինդրները պատրաստված են խոշորահատիկ կավից, թրծված են և կարմիր ներկված: Սրանց վրա ևս ակնհայտ է Արտաշատի անտիկ նմուշներին բնորոշ որոշ մանրամասների առկայություն (օր.՝ լայն թմբիկին փոխարինած նեղ դարակիկ և կողերի նեղացում)[17]՝ ի բացառյալ կալիպտերների մատնանման ելուստի: Նկարագրված նյութը ձևաբանորեն և ըստ հայտնաբերման հանգամանքների՝ ***Դվինի V դ. կղմինդրի ցարդ հայտնի վաղագույն տարբերակն է:***

Նմանաձև ելուստավոր կալիպտերների կիրառությունը փաստագրված է մ. թ. ա. IV-մ. թ. IV դդ. Իբերիայի և Աղվանքի հուշարձաններում[18], ինչպես նաև՝ XII-XIV դդ. Արցախի Հանդաբերդի վանական համալիրում[19]: Այսինքն՝ ժամանակագրորեն Դվինի V դ. թվագրվող բլթակաձև ելուստով կալիպտերները կարելի է համարել տվյալ կղմինդրնե-

---

[14] Տե՛ս **Կ. Գ. Ղաֆադարյան, Ա. Ա. Քալանթարյան,** Դվին II. Դվին քաղաքը և նրա պեղումները (1937-1980 թթ.), Եր, 2002, էջ 24:

[15] Տե՛ս Գ. Քոչարյանի 1981 թ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինում):

[16] Հայտնաբերված կղմինդրները թերի են, կոտրտված, բեկորային վիճակում, ստույգ են միայն տափակ սալի հաստ.՝ 2÷2,5 սմ, կողի բարձր.՝ 3÷3,5 սմ, կողի լայն.՝ 2,5÷3,0 սմ, լայնակի եզրից՝ 1÷1,5 սմ-ի վրա՝ 0,5÷1,0 սմ բարձր., 1÷1,5 սմ լայն. դարակիկ: Կալիպտերի հաստ. 1,8÷2,0 սմ, նեղացող եզրից՝ 5÷5,5 սմ-ի վրա՝ 1÷1,5 սմ բարձր. մատնանման ելուստ:

[17] Տե՛ս **Канецян А. Г.,** նշվ. աշխ.:

[18] Տե՛ս **Апакидзе А.** Города древней Грузии. Тбилиси, 1968, էջ 86-88, նկ. 24-24, **Гагошидзе Ю. М.** Самадло (археологические раскопки). Тбилиси, 1979, էջ 58-62, **նույնի՝** Самадло. Каталог археологического материала. Тбилиси, 1981, աղ. LIX, **Рамишвили Р. М.** Археологические памятники Иорского ущелья, III. Долина Эрцо в позднеантичную эпоху. Тбилиси, 1979 (на груз. яз.), էջ. 33, նկ. 3, աղ. 22-23, **Бабаев И. А.** Античная черепица Кавказской Албании // «Советская археология», 1974, № 2, էջ 55-56, նկ. 7, **Халилов Дж. А.** Материальная культура Кавказской Албании (IV в. до н. э. – III в. н. э.). Баку, 1985, էջ 33-35, աղ. III, 2: Ընդ որում՝ Մինգեչաուրի՝ Սուդագիլան հնավայրի վաղ քրիստոնեական տաճարական կառույցի տանիքը ևս ծածկված է եղել բլթակավոր կալիպտերներով (տե՛ս **Ваидов Р. М.** Раннесредневековое городище Судагылан (Мингечаур) //«Краткие сообщения о докладах и полевых исследованиях Института истории материальной культуры». М., 1954, էջ 136-137, նկ. 64, 1):

[19] Տե՛ս **Հ. Լ. Պետրոսյան, Լ. Վ. Կիրակոսյան, Վ. Ա. Սաֆարյան,** Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Եր., 2009, էջ 40-41, նկ. 32, 33:

րի զարգացման միջանկյալ փուլ:

Դվին հնավայրում քանակապես գերակշռում են կարմիր կավից պատրաստված, կարմիր ներկված, ***առանց դարակիկի տափակ սալերը և առանց մատնանման ելուստի (լայն փռվածքով) կիսափողրակավոր կալիպտերները***[20] (նկ. 2,2):

Սրանց բեկորները երևան են գալիս կենտրոնական թաղամասում և միջնաբերդում՝ V-VI դարերով թվագրվող գտածոների (եղևնազարդ վերադիր գոտիով կարասների, սպիտակավուն անգոբով պատված, երկնագույն վաղ ջնարակով ծածկված խեցանոթների, կլոր, ձվածիր բլթակազարդ տաշվածքներով հաստապատ ապակե թասերի բեկորների) միջավայրում՝

- կաթողիկե եկեղեցու VII դ. հատակի մակարդակից ցած, խառնված V դ. խճանկարի կտորների մոխրախառն (մոտ 0, 60 մ հզորության) շերտում,

- կաթողիկե եկեղեցուց հարավ և հարավ-արևմուտք, V դ. կաթողիկոսական պալատի VI դ. հրդեհված մոխրաշերտը ծածկող նստվածքներում,

- կաթողիկե եկեղեցուց հյուսիս և հյուսիս-արևմուտք, VII դ. կաթողիկոսական պալատին նախորդող՝ V-VI դդ. սպիտակ ավազաքարե շինությունների մնացորդների հորիզոնում[21],

- միջնաբերդում՝ բլրի գագաթային հարթակի վաղմիջնադարյան հորիզոններում և հորերում:

Սեբեոսի վկայությամբ՝ VI դ. 70-ականներին Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդանի) գլխավորությամբ հայերի ապստամբական գործողություններին ի պատասխան պարսիկները Դվինում «զեկեղեցի սրբոյն Գրիգորի … հարին հուր և այրեցին»[22]: VII դ. սկզբին՝ Հայոց մարզպան Սմբատ Բագրատունու օրոք, ավերված եռանավ եկեղեցին վերականգնվեց նոր խաչաձև հատակագծով՝ որպես գմբեթավոր սրահ[23]:

Կաթողիկեն վերակառուցելիս սպիտակ ավազաքարը փոխարինվել է կարմրաշիկավուն ու թխագույն տուֆ քարով, որի տաշվածքների խճառատ շերտը փռված և տոփանված է մերձակա տարածքում[24]: Մոտ 0,70 մ հզորությամբ այս շերտում առկա են կրաշաղախով պատված սպիտակ ավազաքարի բեկորներ, կրաշաղախի կույտեր, ծածկի

---

[20] Ստույգ են միայն կղմինդրի տափակ սալի երկ.՝ 48 սմ, հաստ.՝ 2÷3 սմ, կողի բարձր.՝ 2÷4 սմ, կողի լայն.՝ 1,5÷3,0 սմ, նեղացող կողի երկ.՝ 5÷7 սմ, նեղացող կողի լայն.՝ 1,5 սմ: Կալիպտերի երկ.՝ 45÷46 սմ, վերին ծայրի լայն.՝ 18 սմ, ստորին ծայրինը՝ 14 սմ, հաստ.՝1,5÷2,5 սմ:

[21] Տե՛ս **A. Kalantarian**, նշվ. աշխ., տախտ. 59:5-6, Գ. Քոչարյանի 1979, 1980, 1985, 1990, 1993 թթ. դաշտային օրագրերը (պահվում են Դվինում):

[22] «Պատմութիւն Սեբէոսի», Աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979, էջ 68, Ը:

[23] Տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, էջ 99-100:

[24] Տե՛ս **Ա. Քալանթարյան,** Դվինի կենտրոնական թաղամասի 1971-1973 թթ. պեղումները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1975, № 7, էջ 93:

կղմինդրների, խոշոր աղյուսների, խճանկարի, թևավոր խաչերի, խաչազարդ քարերի կտորտանքներ, ինչպես նաև քարագործի կացիններ, դուրեր, գամեր, մեխեր[25]:

Այսինքն, VII դ. սկզբին ձևավորված տվյալ «խճակերտ հարթակը» հագեցած է ***V դ. կեսերից և VI դարում Դվինում լայնորեն գործածվող կղմիդրի՝ հիմնականում առանց դարակիկի, մի կողմում նեղացող կողերով տափակ սալերի և (լայն փռվածքով) կիսափողրակավոր կալիպտերների բեկորներով*** (նկ. 2,2): Օշականի, Աքորիի, Կոթիի վաղմիջնադարյան հոգևոր կառույցների ծածկի կղմինդրների[26] ու Դվինի կղմինդրի տվյալ տարատեսակի նույնությունը ևս հաստատում է V-VI դդ. թվագրման ճշտությունը:

Սրանց ձևաբանական նախորդները, ժամանակագրական և տարածքային լայն ընդգրկմամբ, դիտվում են Արտաշատում, Կողքիսի հելլենիստական բնակավայրերում, հատկապես մ. թ. առաջին դարերից ի վեր՝ Բոսփորի քաղաքներում և Հյուսիսմերձսևծովյան այլ կենտրոններում, որտեղ վկայված է Սինոպից ներմուծված շինարարական խեցեղենի ակնհայտ ազդեցությունը[27]: Ընդ որում՝ նույն ուրվապատկերով ծածկի կղմինդրներ առկա են նաև տվյալ տարածաշրջանի վաղմիջնադարյան այլ հուշարձաններում[28]:

Երրորդ շինարարական շրջափուլ (VII դ.)

894 թ. մեծ երկրաշաժի ժամանակ վնասվել են Դվինի հոգևոր կենտրոնի բոլոր կառույցները: Կաթողիկեի VII դ. ծածկի կղմինդրների բեկորները ի հայտ են եկել եկեղեցու հատակի պահպանված հատվածների վրա, XV-XVIII դդ. թաղումների հետևանքով խաթարված մշակութային «խառը» հորիզոններում և մերձակայքում[29]: Քննվող կղմինդրնե-

---

[25] Տե՛ս **Կ. Գ. Ղաֆադարյան, Ա. Ա. Քալանթարյան,** նշվ. աշխ., էջ 44, Գ. Քոչարյանի 2014 թ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինում):

[26] Տե՛ս **Есаян С. А., Калантарян А. А.** Ошакан I. Основные результаты раскопок 1971-1983 гг. Ер., 1988, էջ 17, **Հ. Լ. Պետրոսյան, Ս. Գ. Հոբոսյան,** Աքորու վաղ միջնադարյան տաճարի պեղումները (CL-CLIX), «Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում (1986-1987 թթ. պեղումների արդյունքները)», Եր., 1993, էջ 131-137, աղ. CLIX, 2, 3, **Ա. Քալանթարյան, Ս. Հոբոսյան,** Կոթի (2008 թ. դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքները), «Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր», Եր., 2009, էջ 247-255, 266, աղ. XI:

[27] Տե՛ս **Якобсон А. Л.** К изучению раннесредневековой строительной керамики Армении // «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 1, էջ 220-221, «Керамическое производство и античные керамические строительные материалы» // Свод археологических источников. Вып. Г1-20. М., 1966, աղ. 35: 5, 6, 36: 7, 40: 8, 42: 1, 2, 8, **Шамба Г. К.** Эшерское городище (Основные результаты археологических раскопок 1968, 1970-1977 гг.). Тбилиси, 1980, էջ 41, աղ. XXXVIII 3, 4:

[28] Տե՛ս **Якобсон А. Л.** Указ. соч., էջ 219-221, **նույնի՝** Раннесредневековые сельские поселения юго-западной Таврики // "Материалы и исследования по археологии СССР", 1970, № 168, էջ 33-37, նկ. 5, նկ. 6:

[29] Տե՛ս **Կ. Գ. Ղաֆադարյան, Ա. Ա. Քալանթարյան,** նշվ. աշխ., էջ 79, Գ. Քոչարյանի 1992-1993 թթ. դաշտային օրագիրը (պահվում է Դվինում): Հավելենք, որ XV-XVIII դդ., քաղաքի կործանումից հետո, Դվինի հոգևոր կենտրոնը վերածվել է դամբարանադաշտի:

րի բազմաթիվ բեկորներ են հայտնաբերվել նաև երկրաշարժին ուղեկցած հրդեհի հետևանքով VII դ. կաթողիկոսական պալատի փլված տանիքի մոխրառատ միջավայրում[30]: Նման կղմինդրե ծածկի մնացորդներ հայտնաբերվել են և միջնաբերդում՝ քաղաքացիական շինություններով կառուցապատված բլրի գագաթի հարթակին[31]:

VII դ. կղմինդրների՝ մի կողմում նեղացող կողերով տափակ սալերն ունեն V-VI դդ. սալերից ավելի փոքր չափեր, իսկ կիսափողրակավոր կալիպտերները լեզվականման նեղացող ծայրամասում ունեն հաջորդի համար հենարան հանդիսացող օձիք-թմբիկ[32] (նկ. 3): Համանման կղմինդրները բնորոշ են հատկապես VII դ. թվագրվող հուշարձաններին (հմմտ. Աշտարակի՝ Կարմրավոր եկեղեցու կղմինդրե ծածկով տանիքը և Զվարթնոցի, Արուճի, Թալինի, Մրենի տաճարներին, Անիի պալատական եկեղեցուն պատկանող կղմինդրները և այլն)[33]:

Դվինի կղմինդրները հիմնականում ներկված են կարմիր: Տափակ սալերից մի քանիսի վրա արված է հատուկ անցք՝ սալը երկաթե գամով ամրացնելու համար: Առանձնանում են պատկերազարդ եռանկյունի վահանակով կալիպտերները[34], որոնք տեղադրվել են շենքի ճակատային մասում՝ գամով ամրացված սալերի վրա (տե՛ս նկ. 3): Որոշ կղմինդրների վրա առկա են վանքի միաբանների անունից արձանագրված «փոքրիկ հիշատակագրեր և գրչախաղեր», որտեղ հիշատակված է նաև կաթողիկե եկեղեցու Սուրբ Գրիգոր անունը: Տափակ սալերից մեկի ստորին երեսին կա Հիսուս Քրիստոսի՝ բրիչով փորագրված, գրչանկար սրբապատկեր[35]:

---

[30] Տե՛ս **Тер-Аветисян С. В.** Двин. Его история и раскопки в 1937-1938 гг., **Ս. Վ. Տեր-Ավետիսյան**, Հայագիտական հետազոտություններ, Եր., 2010, էջ 257-258, 278 (Կ. Ղաֆադարյանը VII դ. կաթողիկոսական պալատը համարել է V դ. կառույց և այստեղ հայտնաբերված կղմինդրները վերագրել մայր եկեղեցուն, տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, էջ 113-114): Անցյալ դարի 70-ականների պեղումների ընթացքում կաթողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք բացահայտվել է V դ. կաթողիկոսական պալատը, ուստի VII դ. կաթողիկոսական պալատում գտնված կղմինդրները հավանաբար նույն վայրին են պատկանում, այլ տեղից բերված չեն:

[31] Տե՛ս Գ. Քոչարյանի 1986,1987,1989 թթ. դաշտային օրագրերը (պահվում են Դվինում):

[32] Կղմինդրի տափակ սալերի չափերն են. երկ.՝ 31÷42 սմ, լայն.՝ 22,5÷35 սմ, նեղացող եզրինը՝ 15,5÷23,5 սմ, սալի հաստ.՝ 1,5÷2,0 սմ, կողի բարձր.՝ 2÷3 սմ, կողի լայն.՝ 1,3÷2,0 սմ, նեղացող կողի երկ.՝ 3,5÷7,5 սմ, նեղացող կողի լայն.՝ 1÷1,5 սմ: Կալիպտերների չափերն են. երկ.՝ 22÷35 սմ, նեղացող լեզվակինը՝ 6÷8 սմ, վերին ծայրի լայն.՝ 10,5÷16 սմ, ստորին ծայրինը՝ 9÷11 սմ, հաստ.՝ 1÷1,5 սմ, օձիք-թմբիկի բարձր.՝ 2÷3 սմ (տե՛ս **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, նկ. 217, 218):

[33] Տե՛ս **Марр Н.** Описание Дворцовой церкви в Ани. Петроград, 1916, էջ 20-21, նկ. 8-11, **С. Х. Мнацаканян.** Звартноц. М., 1971, էջ 58, 136, նկ. 59, **A. Kalantaryan, G. Karakhanyan, H. Melkonyan, H. Petrosyan, N. Hakobyan, F. Babayan, A. Zhamkochyan, K. Nawasardyan, A. Hayrapetyan,** Armenia in the cultural context of East and West. Ceramiks and Glass (4th-14th centuries), Yerevan, 2009, էջ 77, 81, նկ. 23: 1-4, էջ 158, նկ. 53: 4-6:

[34] Պատկերազարդ կալիպտերների մասին տե՛ս **Դ. Միրիջանյան,** Վաղ միջնադարյան շինարարական խեցեղենի մի տեսակի մասին, «Էջմիածին», նոյեմբեր, 2010, էջ 75-76:

[35] Կղմինդրների վրայի արձանագրությունները և գրչանկար սրբապատկերը տե՛ս **С. В. Тер-Аветисян.** Указ. соч., էջ 261, 278-282, **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, էջ 246-250, 254, նկ. 234:

Այսպիսով, ցարդ հայտնաբերված նյութի քննությունը բացահայտում է անտիկ ժամանակաշրջանի կղմինդրի զարգացման անընդմեջ ընթացքը վաղմիջնադարյան Դվինում: Հնագիտական նյութի և գրավոր աղբյուրների տվյալների համեմատական վերլուծությունը ի հայտ է բերում կղմինդրի ձևաբանական տեսակների ժամանակագրական համապատասխանությունը Դվինի կառուցապատման հիմնական շրջափուլերին: Այլ հուշարձաններում վաղմիջնադարյան կղմինդրի շուրջ 400-ամյա տևական զարգացման ընթացքը խիստ հատվածաբար է ներկայանում: Իրավամբ, Դվինի վաղմիջնադարյան կղմինդրի տեսականին կարելի է դիտարկել որպես համաժամանակյա հուշարձանների շինարարական փուլերի թվագրումը սրբագրող գործոն:

Բանալի բառեր – *Դվին հնավայր, ծածկի կղմինդր, հնագիտական միջավայր, համեմատական վերլուծություն, շինարարական շրջափուլ, անընդմեջ զարգացում, թվագրման գործոն*

ГАЯНЭ КОЧАРЯН – ***Раннесредневековая черепица Двина как датирующий фактор.*** **–** Обнаруженный в Двине материал показывает, что в Армении в эпоху раннего средневековья непрерывно развивалась античная кровельная черепица. Сравнительный анализ данных археологических раскопок и письменных источников выявляет, что типологические формы черепицы хронологически соответствуют основным этапам застройки Двина. Длительный четырёхсотлетний процесс развития раннесредневековой черепицы крайне фрагментарно представлен в других памятниках. Так что двинскую черепицу можно рассматривать как корректирующий фактор при датировке строительных этапов синхронных памятников.

Ключевые слова: *двинское городище, кровельная черепица, археологическая среда, сравнительный анализ, строительный этап, датирующий фактор*

GAYANE KOCHARYAN – ***Dvin's Early Medieval Tile as a Dating Factor.*** **–** The investigation of the discovered material reveals the uninterrupted process of the Classical period tile development in Early Medieval Dvin. Comparative analysis of the archaeological material and written sources data reveals a chronological correspondence of the tile typical forms with the main stages of construction of Dvin. About four hundred year process of development of the Early Medieval tile is represented very fragmentary in other monuments. In fact, the Early Medieval tile range of Dvin may be considered as a correcting factor of dating building stages of the synchronous monuments.

Key words: *Dvin settlement, tile of the roof, archaeological environment, comparative analysis, building stage, uninterrupted development, dating factor*

Նկ. 1

Նկ. 2

Նկ. 3